

ՆԱՐԵԿԻ ԾԱԾԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՃԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

3. 2. ՄԻՐՋՈՑԱՆ

Հոդվածը գրվել է «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի գլխավոր խմբագրի պաշտոնի բերումով: 2001թ. գարնանը, ծանոթանալով Ն. Ղազարյանի «Ինքնակենսագրական նորահայտ փաստեր Գրիգոր Նարեկացու մասին» ուշագրավ հոդվածի¹ նախնական տարբերակին, որտեղ հեղինակը միանգամայն նոր մոտեցում էր ցուցաբերել «Մատենանոցի ողբերգութեան» պոեմի ԻԹ գլխի 29-րդ տողում Նարեկացու գործածած թվերի նկատմամբ, բայց չէր կարողացել դրանք ներկայացնել պատշաճ մակարդակով, այն վերադարձրի հեղինակին լրամշակման, իսկ նրա հարցադրման իսկությունը ստուգելու համար որոշեցի այդ տեսանկյունից ուսումնասիրել Նարեկացու բնագիրը: Պարզվեց, որ ոչ միայն ճիշտ է Նարեկացու ծննդյան թվականի մասին Ն. Ղազարյանի առաջադրած տեսակետը, այլև Մատյանում առկա են ինչպես նույնը հաստատող մի շարք այլ փաստեր, այնպես էլ ինքնակենսագրական ուրիշ բազմաթիվ տեղեկություններ, որոնք անչափ կարևոր են ոչ միայն հանճարեղ բանաստեղծի կյանքն ու գործունեությունը լուսաբանելու, այլև նրա գրական ժառանգությունը և հատկապես «Մատենանոցի ողբերգութեան» գլուխգործոց ստեղծագործությունը ճիշտ հասկանալու և մեկնաբանելու համար:

Հակառակ նարեկացիագիտության մեջ արմատավորված այն տեսակետի, թե իբր Նարեկացին հազվադեպ է անդրադառնում իր կյանքին ու գործունեությանը՝ անձամբ գտնում եմ, որ հենց միայն Մատյանում առկա են այդ կարգի այնքան հարուստ տեղեկություններ, որոնք բոլորը հնարավոր չէ ներկայացնել մեկ հոդվածի շրջանակում: Հետևաբար, ներկա հոդվածում կփորձեմ ընթերցողի դատին հանձնել միայն ամենից կարևորներն ու ակնհայտները: Նախապես ասեմ, որ խնայելով հանդեսի էջերն ու ընթերցողի ժամանակը, չեմ անդրադառնալու այս կամ այն փաստի առթիվ նարեկացիագիտության մեջ արտահայտված տեսակետներին, որովհետև նախ՝ ցանկացողը դրանք կարող է գտնել «Մատենանոցի ողբերգութեան» պոեմի ակադեմիական համեմատական բնագրի հրատարակության՝ ամենայն բարեխղճությամբ կազմված ծանոթագրություններում²: Երկրորդ՝ թե ո՛վ ի՛նչը, ինչպե՛ս է մեկնաբանել, թվում է, ներկա դեպքում առանձնապես կարևոր չէ, քանզի, եթե բացահայտված է ճշմարտությունը, ի՞նչ կարիք կա վերարտադրելու դրա որոնման ճանապարհին թույլ տրված սխալներն ու մոլորությունները, որոնք, այնուամենայնիվ, նպաստել են ճշմարտության բացահայտմանը:

Իսկ որ Մատյանում կան վերծանության կարոտ բազմաթիվ ծածկագրություններ ու այլաբանություններ, Նարեկացին այդ մասին հայտնում է հենց Մատյանի «Դրույթինը»-ում, որտեղ, ի թիվս նրանում ամփոփված այլևայլ արժեքների, նշում է նաև՝ «աներևութից յայտնութեանց», «մեղանաց խոստովանութեանց», «ցուցմունք գաղտնեաց», «տարածմունք ծածկեցելոց», «յանդիմանութիւնք

¹ Տե՛ս Ն. Ղազարյան, *Ինքնակենսագրական նորահայտ փաստեր Գրիգոր Նարեկացու մասին*, «Բանբեր Երևանի համալսարանի», 2002, № 3, էջ 62-66:

² Տե՛ս Գրիգոր Նարեկացի, *Մատենանոցի ողբերգութեան, աշխատասիրությանը՝ Պ. Մ. Նաչատրյանի և Ա. Ա. Ղազիմյանի, Եր., 1985, էջ 973-1122:*

թաքուցելոց», «սպեղանիք զարաւորք վիրաց անբժշկականաց», «դեղք ազդողականք ցաւոց անտեսականաց», «հնարաւորութիւնք բազմամասնեայ երկանց վտանգօից», «ի դիմաց կարեաց ամենից բնութեանց, առիթք արտասուաց, պատճառք աղաթից»: Բերված բոլոր արտահայտությունները համարելով անչափ կարևոր՝ կցանկանայի հատուկ ուշադրություն հրավիրել դրանցից հատկապես երկուսի երկրորդ կեսի վրա՝ «վիրաց անբժշկականաց», «ցաւոց անտեսականաց»: Կասկածից վեր է, որ «անբուժելի վերքեր» և «անտեսանելի ցավեր» արտահայտությունները վերաբերում են բանաստեղծի հոգուն: Ուստի հենց դրանք էլ պետք է հիմք ծառայեն Մատյանը հասկանալու, հետևաբար նաև նրանում գաղտնագրված շատ ու շատ ճշմարտություններ ի հայտ բերելու համար: Ուշագրավ է, որ բանաստեղծն այդ ամենը թվարկում է ոչ միայն Մատյանի սկզբում՝ որպես անելիքի ծրագիր, այլև վերջում՝ որպես կատարածի արձանագրում: Ահա թե ինչ ենք կարդում Բան ԶԸ-ի Գ հատվածի սկզբնատողերում.

Սոյն գիր իմովս ձայնի, իբր զիս, ընդ իմ աղաղակեցէ,
**Տարածեցէ զծածկեալսն, հոչակեցէ զգաղտնիսն,
 Կականեցէ զկատարածն, հնչեցէ զմոռացեալսն,
 Յայտնեցէ զաներելոթսն, բարբառեցէ զբարորսն,
 Քարոզեցէ զխորոցն, պատմեցէ զմեղացն,
 Մերկացուցէ զանտեսիցն, ցուցցէ զկերպարանս թաքուցելոցն:
 Ծաւշափեցի՛ն սովաւ որսքն, գտցի՛ն գայթակղութիւնքն,
 Յանդիմանեցի՛ն անճառքն, քամեցի՛ն չարեացն մնացուածք**
 (այս և հետագա ընդգծումներն իմն են, - Հ. Մ.):

Արդ՝ փորձենք բացահայտել Մատյանում առկա բազում գաղտնիքներից ու ծածկագրված փաստերից մի քանիսը:

Փաստ առաջին: Բան ԺԵ, տ. 88-104:

Եթէ մարդկան կարգեցեր զայս կէտ սահմանի մեծի պայմանի
 Ի բարեվիճակդ քո կանոնաց՝
 Ոչ փոխատրել անդրէն չարի չար,
 Այլ եւթանասնիցս եւթն թողուլ
Անդուստ ի յաւոր զիրանքանչիւր մեղանաց զպարտս.
 Եւ այդ բան՝ առ մեզ, որ միշտ ի բնութեան ունիմք
 Բնատրաբար ուղերձեալ զքիծս չարեաց
 Անհամար բիրոց նորոգ յայտնելոց,

 Զի որ զկատարեալ մաքրութիւնն ունէր՝
 Աւետարանիչն կենացդ բանի Յովհաննէս,
 Եւ զհնքն ընդ հասարակաց բնութեան լծակցեալ՝
 Հաստատեաց զճշմարտութիւն քո՝ առ իմս ստութիւն յոյժ
 արդարացեալ.
Թէ ասեմք, ասէ, մեղս ինչ մեք չունել՝ սուտ առնենք զնա:

Բանաստեղծը պարզ ու մեկին ասում է, որ պետք է «եւթանասնիցս եւթն թողուլ», այսինքն՝ 70-7=63: Այնուհետև նույնը չկրկնելու համար ավելացնում է՝ «անդուստ ի յաւոր զիրանքանչիւր մեղանաց զպարտս»: Միջնադարյան մտածողությանը քիչ թե շատ տեղյակ ամեն ոք կհաստատի, որ մարդու համար հատկապես յոթ մեղք համարվում էր մահացու: Դրանք էին՝ հպարտությունը, նախանձը, բարկությունը, ծուլությունը, ագահությունը, որկրամոլությունը և բղջախոհությունը: Ըստ այդմ, համաձայն բանաստեղծի պահանջի, 63-ից պետք է հանել 7, պարզ է՝ կատացվի 56: Որ սա հենց այդ գլուխը գրելիս Նարեկացու ունեցած տա-

րիքն է, այսինքն՝ լրացել է 55 տարին, և թևակոխել է 56-ի մեջ, հուշում է «Եւ այդ քան՝ առ մեզ, որ միշտ ի բնութեան ունիմք» տողը: Ինչ խոսք, որ ծնվելու օրվանից մինչև մահ մարդս «ի բնութեան» ունի իր տարիքը, որից ոչ ոք ոչ մի օր պակասեցնել չի կարող: Իրավամբ հարց է ծագում. իսկ ինչի՞ց է իմացվում, որ հենց այդ ժամանակ է (≈1000թ. հոկտեմբեր) լրացել նրա 55 տարին, և սկսվել 56-րդ տարին: Բանն այն է, որ Մատյանի հենց սկզբում (Բան Բ, տ. 47-53) բանաստեղծը, դիմելով Աստծուն, խնդրում է.

Ծնորհեա՛ կատարել ի քոյդ հաճութիւն, արհմեալդ կամաց,
 Զսկզբնատրեալ մատեան մաղթանաց այսր ողբերգութեան:
 Եւ ընդ լալով սերմանել բանիս,
 Ի նախընթաց չուս ստոիճանաց արեւկանացս պատրաստութեան,
 Ի կատարածն ժամանելոյ հաւաքման հնձոցն՝
 Դարձայց բերկրեցեալ լրութեամբ քատութեան՝
 Պտղոյն երանութեան որայիցն բարութեան:

Ընդգծված տողում պարզորոշ ասված է, որ Մատյանն սկսել է գրել հնձի ժամանակ: Ի հաստատումն նույնի՝ բանաստեղծը հիշատակարանում նորից շեշտում է, որ ինքը Մատյանն սկսել և ավարտել է «յետ երից ամաց անցելոց, որ զկնի գալստեան ի կայս եւ ի կոյս կողմանց հիւսիսոյ դիմաց արեւելից յաղթող եւ մեծ կայսերն հոռոմոց Բասիլ»³: Վաստակաշատ նարեկացիագետ Պ. Խաչատրյանը, մանրամասն քննարկելով բյուզանդական հայազգի կայսր Վասիլ 2-րդի Հայաստան կատարած արշավանքի ժամանակի հարցը, գրում է. «Նարեկացու ստեղծագործական աշխատանքը, ուրեմն, սկսվել է 1000թ. հուլիսից հետո և շարունակվել ամբողջ երեք տարի, մինչև 1003 թ. ներստյալ...»⁴: Հենց այն փաստը, որ բանաստեղծը Մատյանի 15-րդ գլխում է առաջին անգամ նշում իր տարիքը՝ 56, որը, ինչպես դեռ կտեսնենք, քանիցս կրկնում է հաջորդ գլուխներում, հիմք է տալիս եզրակացնելու, որ նա պետք է ծնված լինի աշնանը, ամենայն հավանականությամբ՝ հոկտեմբեր ամսին⁵:

Փաստ երկրորդ: Մատյանի ԻԶ գլխի Բ ենթագլխում բանաստեղծը գրում է.

Պարտուցն ժխտեալ տաղանդացն՝ ճեպով մեծաւ ի տուծի,
 Ես ապիկար՝ մատնեալ անարժան գործովքս յիրաւի,
 Վատնիչ արքունի գանձուց՝ կրկնադատ եւ անթափելի,
 Պատասխանատու մեծիճ՝ ըմբռնեալ անհրաժարելի,
 25 Բիր քանքարոյ խնդիր՝ ես չունիմ կշիռ մի ունկի:
 Անբարեխաւս կապեալ՝ ի պահեստ դառն արգելանի,
 Հեծումն եւ վաստակ ցաւոց՝ ճաշակեալ յանճշոյլ բանտի,
 Անապաւէն տանջեալ՝ անթոշակ կա՛մ ողորմելի,
 Այլ յեղանակ ինձ ողբականաց աստուատ կնքեցի,
 30 Փոխատրեցի սովին բարբառով կոծ կսկծելի,
 Կարգադրեցի շրջաբերութեամբ ի նոյն պայմանի՝
 Անհատական թիւ խորհրդական երկեակ տասնեկի:

³ Տե՛ս նույն տեղը, էջ 642:

⁴ Պ. Խաչատրյան, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, գիրք առաջին, Եր., 1996, էջ 117:

⁵ Ի դեպ՝ Պ. Խաչատրյանը գտնում է, որ, համաձայն Հայսմապուրջ ժողովածուների, Նարեկացու «հիշատակի տոմը կատարվել է» հոկտեմբերի 14-ին կամ փետրվարի 27-ին (մանրամասն տե՛ս Պ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 171-172): Դատելով հեղինակի վկայակոչած աղբյուրագիտական մանրամասներից (տե՛ս նույն էջերի տողատակի ծանոթագրությունները) կարծում եմ, դրանցից ճշմարտությանն ավելի մոտ է առաջինը:

- Անփրկելի մատնեալ բնութեան չարեացս գերի,
 Սուր սուներաւ սաստից գոյութիւն բնութեանս յաւշատի:
 40 Յիշատակաւ բենին՝ աստստին ի դատաստանի,
 Անծագելի մռայլ՝ չարատես աչացս երեւի,
 Անձեռնկալ կապեալ՝ եղկելիս ի տարակուսի,
 Ահարկութիւն դիմաց պատկերի վերնոյն տեսանի,
 Յոյժ անարեւ եւ անվերարկու՝ ի տարտարոսի,
 45 Անապաւէն մոլար՝ մորմոքեալ ի հուր գեհեհնի,
 Անյայտնելի կորուստ՝ կործանեալ ի մեղաց վրի:
 Ահա գոր ունիմ արծաթ անպիտան՝ ո՛չ երբէք յարգի
 Եւ ո՛չ ընդունի եւ կամ համբարի ի գանձ տէրունի,
 Հայցուած պղտոր եւ ձեռն անմաքուր աննուիրելի,–
 50 Այլ բեկեալ սրտիւ, մատանց տատանմամբ, յոյս առեալ դարձի,
 Զդէմս ի յերկիր եղեալ, պաղատիմ մաւրդ Յիսուսի:

Հատվածն ամբողջությամբ լինելով շատ կարևոր բանաստեղծի հոգեկան ու ֆիզիկական ծանր վիճակը պատկերացնելու համար՝ ուշադրություն դարձնենք ընդգծված տողերից հատկապես առաջին երկուսի վրա (տ. 31-32): Դրանցից երկրորդը, ինչպես հավաստում է գիտաբանական բնագրի տվյալ գլխի ծանոթագրող Պ. Խաչատրյանը, «երեք զանազան մեկնությունների տեղիք է տվել»⁵: Համաձայն չլինելով դրանցից և ոչ մեկի հետ՝ առաջարկում են չորրորդ տարբերակը: Այստեղ բանաստեղծը, իմ խորին համոզմամբ, նորից հայտնում է իր տարիքը, բայց նախորդի համեմատությամբ փոքր-ինչ այլ ձևով: Այդ է հուշում «կարգադրեցի շրջաբերությամբ ի նոյն պայմանի» տողը: Ըստ այդմ՝ «անհատական թիւ», «երկեակ տասնեկի» արտահայտությունները պետք է հասկանալ 20-ի մեջ եղած «կենտ-պարզ» թվերը, որոնք են՝ 1,3,5,7,11,13,17,19: Դրանց բոլորի գումարը կազմում է 76: Մնաց «խորհրդական» բառը, որի կապակցությամբ, սեղմագրելով Գ. Ավետիքյանի մեկնաբանությունը, Պ. Խաչատրյանը գրում է. «Նարեկացին փոխաբերաբար նկատի ունի ավետարանական առակը քանքարը կամ մնասը շահեցնելու մասին. նախապես ստացած տաս արծաթյա մնասը ծառան շահեցնում, դարձնում է քսան, որը տերը շնորհում է նրան» (էջ 1020, ընդգծումն իմն է, -Հ. Մ.): Եթե տերը իրեն հասանելիք 20 քանքարը շնորհում է ծառային, նույն տրամաբանությամբ 76-ից պետք է հանել 20, ուստի կստանանք 56, որը հենց Նարեկացու տարիքն է: Ինչպես 20 արծաթադրամը ծառային շնորհելուց հետո տիրոջը մնացին իր մյուս ունեցվածքները, այնպես էլ 76-ից 20 հանելու դեպքում Նարեկացուն մնում է իր տարիքը, որը ճիշտ 56 է:

Փաստ երրորդը Ն. Ղազարյանի բացահայտած ԻԹ գլխի տող 29-ի 493 թվի գաղտնիքն է, որին ավելորդ են համարում անդրադառնալ: Ասեմ միայն, որ այս երեք գլուխների (ԺԵ, ԻԶ, ԻԹ) թվաբանարների գումարը (15+26+29) նույնպես տալիս է 70, որով Նարեկացին, փաստորեն, հասկացնում է, որ իր տարիքն առաջին անգամ հայտնել է հենց ԺԵ գլխի 70 թվի խորհրդի միջոցով: Այստեղից հետևում է, որ Մատյանը մի կուռ ամբողջություն է ոչ միայն իր բովանդակությամբ, ոգով ու գրելաձևով, այլև կառուցվածքով, որի մասերն ու մասնիկները փոխկապակցվածությամբ ու փոխլրացմամբ ստեղծում են ճարտարապետական մի վիթխարի կառույց, որը չունի որևէ ավելորդ, պատահական կամ մեկուսի դետալ:

Փաստ չորրորդ: Եթե մինչև այժմ Նարեկացին իր տարիքը հայտնում էր գումարման և հանման թվաբանական գործողությունների միջոցով, ապա ԼԱ գլխում նույնը անում է բազմապատկման գործողությամբ: Ահա այդ հատվածը (տ. 86-100).

⁵ Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, էջ 1019 (այսուհետև այս հրատարակությունը հղելու ենք տեքստում փակագծերի մեջ նշելով միայն էջաբանարը):

Թանգոգնիմ ասել,

Թէ որ կարդայ զքեզ գովեստի, ծանուցեալ զքեզ, թէ իցես,

Թէ եւ եւթամբք իցէ վարակեալ կրկնապատիկ

պատժաւորութեամբ, —

90 Առ այս արինակ կիրթ ձեռնարկութեան, — զիա՞րդ ոչ քո իցէ:

Թորս է տեսանել ի մէջ արջնատես ազաւուց՝ սպիտականիշ

երամս աղանեաց,

ի մէջ խրոխտականաց ձիոց անմաքրից՝ որոջս հանդարտաբարս,

ի թիւս շանց գազանականաց՝ գառինս նուիրելիս,

Հեզութիւն՝ ի խստութեան, կատարելութիւն՝ ի թերութեան,

95 Խոնարհութիւն՝ յամբարհաւաճութեան, ճշմարտութիւն՝ ի ստութեան,

Միամտութիւն՝ ի մանկութեան, անբծութիւն՝ յալլամտութեան,

Բարարութիւն՝ ի շարութեան, պարկեշտութիւն՝ ի լկտութեան,

Ողորմութիւն՝ յանգթութեան, ապաշաւանք՝ յանյուսութեան,

Քաղցրութիւն՝ ի բարկութեան, հաշտութիւն՝ ի թշնամութեան,

Անոխութիւն՝ ի խածանողութեան, քաջալերութիւն՝ ի լկտութեան,

100 Աւրհնութիւն՝ ի նետաձգութեան:

Ինչպէս տեսնում ենք, վերջին 8 տողում Նարեկացին գործածում է հակադիր ու իրարամերժ հասկացությունների զույգեր: Ընդ որում, դրանցից 7-ում առկա է երկուական զույգ, իսկ ութերորդում՝ մեկ զույգ: Միաժամանակ 88-րդ տողում ասում է, որ «եւթամբք իցէ վարակեալ կրկնապատիկ պատժաւորութեամբ», այսինքն՝ ութը, լինելով զույգ թիվ, պարունակում է «կրկնապատիկ» հակադիր հասկացություն, որը պետք է «վարակել» կամ, որ միևնույն է, բազմապատկել յոթով: Արդյունքում նորից կատանանք 56:

Փաստ հինգերորդ: Եթե, ինչպէս ասացի, Մատյանի արարումն սկսել է 1000 թ. ամռանը՝ հունձի ժամանակ, և 14 գլուխ շարադրելուց հետո միայն բանաստեղծը հարկ է համարել հայտնել իր տարիքը (դա կարող էր լինել 1000 թ. աշնանը՝ մոտավորապես հոկտեմբեր ամսին) և դրանից հետո նույնը կրկնել է ևս 3 անգամ, այդ թվում՝ ԼԱ գլխում, ապա դա նշանակում է, որ ԺԵ գլխից ընդամենը մի քանի գլուխ անց պետք է մտներ 1001 թվականի մէջ: Նույն տրամաբանությամբ՝ 1001 թվականին՝ իր 56-ամյակը լրանալուց հետո, Նարեկացին կարող էր իրեն համարել 57-ամյա: Եվ ահա ԼԸ գլխի 60-61 տ. կարդում ենք.

Դարձեալ վերստին աշխար* կրկին եղկելոյս,

Քանզի գայ հասանէ առ հասկ հասակիս անհնարին բարկութեամբ:

Այս տողերում թեև աներևույթ չի գործածված տարիք նշանակող որևէ թիվ կամ քանակական մեծություն, բայց և այնպէս բանաստեղծն ինչ-որ ակնարկ է անում հենց իր հասակի մասին: Փաստորեն առաջին տողի հինգ բառերից երեքը՝ դարձեալ, վերստին, կրկին, հոմանիշներ են: Ինչ վերաբերում է հաջորդ տողին, ապա բանաստեղծն ասում է, թե գալիս հասնում է հասակիս հասկին անհնարին բարկությամբ: Դրանով իսկ հասկացնում է, որ իր տարիքի մէջ տեղի է ունեցել որոշակի փոփոխություն, որ ժամանակը անկասելիորեն, անխուսափելիորեն հասունացնում, հասկի է հասցնում բանաստեղծ-ցորենի կյանքը:

Ուստի ուշադրություն դարձնենք նույն տողում կողք կողքի գետեղված հասանէ, հասկ, հասակիս բառերին: Դիմելով նույնարմատ բառերի այդօրինակ գործածությանը՝ բանաստեղծը ցանկացել է հասկացնել ընթերցողին, որ տվյալ դէպքում գործ ունենք, իր իսկ բառերով ասած, «ցուցմունք գաղտնեաց»-ի հետ: Իսկ ի՞նչ կարելի է անել: Բառի հետ կատարվող հիմնական գործողությունը, բնականաբար, դրա վանկատումն է: Ուստի, վանկատելով դրանք, կունենանք

* Բնագրում՝ աշխարհ. ճշտել ենք ըստ այլընթերցումների:

հետևյալ պատկերը՝ հա-ա-ԱԷ, հասկ, հա-ա-կիս: Փաստորեն «հասկ» բառը միավանկ է, իսկ մյուս երկուսն ունեն 2-ական ընդհանուր՝ հա-, -ա- վանկ: Հասկանալի է, որ գաղտնիքը պետք է որոնել հենց հա-, -ա- վանկերի մեջ, որոնց տառերի փոխարեն տեղադրելով դրանց թվային արժեքները՝ հ-70, ա-1, ս-2000, ա-1՝ կունենանք 71 և 2001: Հարկավ, 2001-ը պետք է հասկանալ որպես 2-րդ հա-գարամյակի 1 թվական, կամ՝ պարզապես՝ 1001թ.: Ինչ վերաբերում է 71-ին, ապա վերջինիս հետ պետք է կատարել նույն գործողությունները, ինչ կատարեցինք ժե գլխի 70 թվի գաղտնիքը բացահայտելիս, այսինքն՝ նախ հանենք 7, իսկ մնացածից՝ նորից 7: Հետևաբար կստանանք 57: Ինչպես ասացի, իմ կարծիքով, Նարեկացին պետք է ծնված լինի աշնանը, իսկ ավելի ստույգ՝ հոկտեմբերին: Ըստ այդմ, ենթադրելի է, որ 1001 թ. հոկտեմբերին Նարեկացին մտել է 57-ամյա հասակի մեջ, բայց դեռ չի դարձել 57 տարեկան: Փաստորեն Մատյանն սկսելուց հետո անցել է շուրջ 1 տարի 3 ամիս և բանաստեղծը հասցրել է շարադրել 38 գլուխ և դեռ պետք է շարադրի 95-38=57 կամ՝ 93-38=55 գլուխ: Ներկա դեպքում ասում են 57 կամ 55, որովհետև, իմ խորին համոզմամբ, ՂԲ և ՂԳ գլուխները Նարեկացին գրել է Մատյանն ավարտելուց որոշ ժամանակ անց, այսինքն՝ սկզբնապես Մատյանն ունեցել է 93 գլուխ*, բայց դրանից հետո բանաստեղծի կյանքում տեղի է ունեցել կարևոր իրադարձություն, որը պատճառ է դարձել Մատյանը շարունակելու և երկու գլխով հարստացնելու: Այստեղից հետևում է, որ Մատյանի ներկա կառուցվածքը կարիք ունի որոշ փոփոխության: Իսկ թե ինչ կովաններ ունեն մյան պընդման համար, այդ մասին մեկ այլ աղիթով:

Փաստ վեցերորդ: Մատյանի ԽԳ գլխում նույնպես բանաստեղծը, իմ կարծիքով, հայտնում է իր տարիքը: Ամբողջ գլուխը, բաղկացած լինելով ընդամենը 49 տողից, ունի հետևյալ կարևոր հատվածը.

- Այլ քեզ՝ արարչիդ հոգուց ես մարմնոց
 20 Ամենայն ինչ լուսաւորեալ է,
 Ամենայն ինչ առաջի է,
 Ամենայն ինչ գրեալ է,
 Ամենայն ինչ դիւրին է,
 Համայնն հնարաւոր է,
 25 Իմաստն գլխաւորեալ է,
 Խոստումն լցեալ է,
 Կամելն կատարեալ է,
 Բո կտակն աւետարան է,
 Բո վճիռն ազատութիւն է,
 30 Բո մատեանն շնորհ է:
 Ոչ փակեալ ես ընդ արինաւք,
 Ոչ պարունակեալ ես ընդ կանոնաւ,
 Ոչ արգելեալ՝ ընդ նուազութեամբ,
 Ոչ խոնարհեալ՝ ընդ հնազանդութեամբ,
 35 Ոչ պարագրեալ՝ ընդ փոքրկութեամբ,
 Ոչ չափեալ ես ընդ սահամաւ,

* Դիտելի է, որ Մատյանի ներկայիս ՂԴ և ՂԵ վերջին երկու գլխի տողերի թիվը համապատասխանաբար 41 և 52 է, որոնց գումարը հավասար է 93-ի: Դրանով Նարեկացին անողդակիորեն փաստել է, որ Մատյանն սկզբնապես ունեցել է 93 գլուխ: Ասենք նաև, որ ՂԲ գլխի ծանոթագրող վաստակաշատ նարեկացիագետ Ա.Ղազինյանի կարծիքով «կառուցվածքորեն ապաստելի էր, որ ՂԲ և ՂԳ գլուխները իսկապես լինեն վերջում ՂԴ և ՂԵ գլուխներից հետո» (էջ 1112):

- Ոչ վրիպեալ՝ ի բարկութենէ,
 Ոչ այլայլեալ ինչ՝ ի ցասմանէ,
 Ոչ սխալեալ՝ ի խստութենէ,
 40 Ոչ ամբոխեալ՝ ի խոտվութենէ,
 Ոչ դղրդեալ՝ յանգիտութենէ,
 Ոչ փոփոխեալ՝ յողորմութենէ,
 Ոչ պակասեալ՝ ի բարձրութենէ,
 Ոչ լքեալ՝ յայցելութենէ,
 45 Ոչ տկարացեալ՝ ի փրկութենէ:

Բերված 27 տողը, փաստորեն, բաժանված է երկու հատվածի՝ I տ. 19-30 և II տ. 31-45: Ընդ որում, առաջին հատվածն ունի 12 տող, որի առաջին երկու տողը, արտահայտելով մեկ ամբողջական միտք, վերջանում է է՝ օժանդակ բայով: Նույն ձևով են ավարտվում նաև մյուս բոլոր տողերը: Այսինքն՝ առաջին հատվածում տողավերջում կա 11 է: Ինչպես գիտենք, է տառի թվային արժեքը 7 է, ուստի, եթե տասնմեկը բազմապատկենք (կամ «վարակենք») 7-ով՝ հետևելով Բան ԼԱ-ում բանաստեղծի տված խորհրդին, կստանանք 77, որից հանելով 20 (ինչպես վարվեցինք ԻԶ գլխի ծածկագրությունը վերծանելիս)՝ կստանանք 57, որը բանաստեղծի տարիքն է այս գլուխը գրելու ժամանակ: Դիտելի է, որ այս հատվածի է-ով ավարտվող տողերից առաջին 4-ն ունեն «ամենայն» սկսվածք, իսկ վերջին 3-ը՝ «քո», որոնց գումարը նույնպես 7 է: Վերջինս, բազմապատկելով 7-ով, ինչ խոսք, կստանանք 49, որքան է գլխի տողերի թիվը:

Ոչ պակաս հետաքրքիր է նաև 2-րդ հատվածը, որի բոլոր 15 տողերն ունեն «ոչ» սկսվածք: Դրանցից վերջին 9 տողը նույնպես վերջում ունի է, իսկ մյուս 6 տողը, սկսվելով ոչ-ով, տողամիջում ունի ընդ, բայց չի վերջանում է-ով: Փաստորեն՝ Ոչ...ընդ... կապակցությունը և վերջում է-ի բացակայությունը նշանակում է, որ այս 6 տողը դուրս է ամբողջից. այսինքն՝ չպետք է հաշվել նրա հետ կամ ավելի ճիշտ՝ պետք է հանել: Իսկ ինչի՞ց պետք է հանել: Ինչպես ասացի, այդ հատվածի վերջին 9 տողը նույնպես ավարտվում է է-ով: Տվյալ դեպքում նկատի է առնվում 9-ի և 7-ի արտադրյալը՝ 63, որից հանելով 6 (է վերջավորությունն չունեցող տողերի թիվը)՝ նորից կստանանք 57:

Փաստ յոթերորդ: Եթե մինչև այժմ բանաստեղծն այլևայլ միջոցներով հայտնում էր իր տարիքը, որով, անշուշտ, դժվար չէ որոշել նրա ծննդյան թվականը, ինչը և արել է Ն. Ղազարյանը, ապա, կարծես չվստահելով, որ այդ եղանակով ընթերցողը կարող է ճիշտ որոշել իր գաղտնագրությունները, հարկ է համարել ուղղակիորեն գաղտնագրել նաև իր ծննդյան թվականը, որը վերծանելու դեպքում հաստատվում է Ն. Ղազարյանի կատարածի անառարկելիությունը: Մատչյանի 46-րդ գլխում (Բան ԽԶ, տ. 27-43) բանաստեղծը գրում է.

- Երից հարիւրոց և տասանց վեցից յաւիիք շաղկապեցար՝
 Յարեալ ի քեզ ընդ նոսին ի նոյն
 Եւ պատշաճական մասունս չափոց ազդողականաց հինգ
զգայութեանց,
 30 Ձեռիճ հաստմամբ յարմարոստեան մատանցոյ շառաիղաւք՝
 Ջի մի՛ եւ երեւելիոյ միութեանութիւն քումդ տեսութեան՝
 Մտացոյ դիտման անդատ եղիցի.
 Ջի ոմանք ստուարք են եւ զարաւորք,
 Եւ այլք փոքունք են եւ պիտանիք,
 Կէսք՝ կարծրակերտք եւ ազդողականք,
 Են եւ գողտրականք եւ պատուականագոյնք,
 Դարձեալ՝ կարելորք և պատկանելիք:

Իսկ թարգմանութիւնք սոցին տեսութեան ի քեզ են նկարեալ՝
 Իբր յարձանի անջնջականի, անձն իմ եղկելի,
 Որպէս զի եւ տարր ժամանակաց
 Եւ շարունակ հետեւման ատուրցն առ պսակ ամին,
 Իբր կանոնաւ իմիք սահմանեալ մասամբքդ՝
 Անսխալ և անայլելի պահեսցի:

Նախ ասենք, որ Մատյանի այս հատվածը, սկսած միջնադարյան մեկնիչներից, ստացել է կազմախոսական բացատրություն, որը ավանդաբար փոխանցվել է նաև նոր ժամանակների նարեկացիագետներին (մանրամասն տե՛ս ակադեմիական հրատարակության ԽԶ զլխի ծանոթություն 6-ը, էջ 1051-1052): Մինչդեռ իրականում հանճարեղ բանաստեղծը, դիմելով մարդու կազմությանը, ի մասնավորի մատների կառուցվածքին, ցանկացել է հեշտացնել ընթերցողի գործը, որպեսզի նայելով իր իսկ ձեռքերի մատներին, առանց մտավոր ճիգ ու ջանք գործադրելու, «Մտացոլ դիտման անդատ եղիցի», կարողանա հասկանալ կամ, իր իսկ բառով ասած, «թարգմանել» գրածի իմաստը: Ընդամիս, դա արել է միայն հանճարին վայել պարզությամբ ու հստակությամբ՝ գործածելով տարածական մի շարք հանրամատչելի հասկացություններ՝ 360 հոդ, 5 զգայարան, մատների շառավիղներ, այսինքն՝ 10 մատներ, որոնցով դեռ ինչ-որ գործողություններ կատարելուց հետո ասում է, որ այս ամենի թարգմանությունը «ի քեզ են նկարեալ՝ իբր յարձանի անջնջականի, անձն իմ եղկելի»: Ասել է թե մեր իսկ մարմնի մասերով բանաստեղծը մեր մարմնի վրա քանդակել է իր արձանը: Իսկ ինչու՞ հենց մարդու մարմնի վրա է ցանկացել բանաստեղծը քանդակել իր արձանը: Հարցի պատասխանը տալիս է ինքը՝ բանաստեղծը. որպեսզի «տարր ժամանակաց»-ը, օրերի անվերջ հոլովմամբ տարիներ գոյացնելով, ինչ-որ կանոնով սահմանված մասերով «անսխալ ու անայլելի» պահպանի իր արձանը: Այո՛, այսքան պարզորոշ միացնելով տարածաժամանակային հասկացությունները, մեր իսկ ձեռքերի վրա արձանացրել է իր ծննդյան թվականը, որը կարող է հեշտությամբ յուրացնել ու պահպանել ցանկացած մարդ՝ անկախ իր մտավոր ու հոգևոր զարգացման մակարդակից, սեռից ու տարիքից:

Այժմ փորձենք «թարգմանել» վերը բերված հատվածում Նարեկացու գաղտնագրած թվերը: Ինչպես տեսանք, Նարեկացին ասում է, որ մարդս ունի 360 հոդ (թե որքանով է դա ճիշտ, ներկա դեպքում ոչ մի նշանակություն չունի, այլ կարևոր է 360 թիվն ինքնին վերցրած) և 5 զգայարան, իսկ «մտացոլ շառավիղաց»-ը, բնականաբար, նշանակում է 10: Այնուհետև, այս թվափկումն ընդմիջարկելով թվային մեծություն չպարունակող երկու տողով, բանաստեղծն ասում է, որ մատներից «ոմանք ստուարք են եւ զաւրատրք, եւ այլք փոքունք են եւ պիտանիք»: Գաղտնիք չէ, որ մարդու ցուցամատը, միջնամատը և մատնեմատը «ստուարք են եւ զաւրատրք», իսկ բութը և ճկույթը «փոքունք են եւ պիտանիք»: Իսկ հարկ կա՞ ասելու, որ այդ ամենը միասին կազմում են 10, ուստի մեր ունեցած թվերին պետք է ավելացնել ևս 10: Հաջորդ տողով՝ «Կէսք՝ կարծրակերտք եւ ազոդականք», թեև շեշտում է եղունգներ ունենալու պարագան, բայց ամբողջ տողի հորինման նպատակը «կէսք» բառի գործածությունն է, որ նշանակում է 10-ի կես, այսինքն՝ 5: Այնուհետև 36-րդ տողում ասվում է. «Են եւ գողտրականք և պատուականագոյնք»: Ընդհատ է, «գողտրականք» են թե ճկույթ և թե բութ մատները, բայց կասկածից վեր է, որ դրանցից «պատուականագոյնք» են բութ մատները, ուրեմն՝ կունենանք ևս 2: Վերջապես, թվարկումն ավարտում է «Դարձեալ՝ կարեւորք եւ պատկանելիք» տողով, որի «դարձեալ» բառն արդեն հուշում է, որ գործ ունենք նույն թվի հետ, այսինքն՝ 2: Արդ, ի մի բերելով այդ ամենը, կունենանք հետևյալ հավասարումը՝

$$360+5+10+10+5+2=394:$$

Եթե հայկական տոմարով ունեցած թվականը համաքրիստոնեական տոմարով արտահայտելու համար գումարենք 551, կունենանք 945 թ.: Ահա հայ բանաստեղծական մեծագույն հանճարի ծննդյան ինքնամատույց ստուգագույն թվականը, որը, իր իսկ բառերով ասած, այսուհետև պետք է մնա «անսխալ և անայլելի»:

Իսկ թե ինչպես է բանաստեղծն իր անձը նկարել մեր մարմնի վրա «իբր յարձանի անջնջականի», փորձենք ցուցադրել: Խնդրում եմ ծալել ձախ ձեռքի բթամատը և իրար միացնել երկու ձեռքի բոլոր մատները՝ բացված վիճակում: Պարզ է՝ կունենանք 9, որը համարենք հարյուրավոր, այնուհետև ձախ ձեռքի բացված չորս մատները տանել փոքր-ինչ դեպի ձախ և համարել տասնավոր: Մնացին աջ ձեռքի մատները, որոնք էլ կլինեն միավորներ: Հանրագումարում կունենանք՝ 900+40+5=945:

Փաստ ութերորդ: Եթե ԽԶ գլխում Նարեկացին հայտնել է իր ծննդյան թվականը, ապա նույն գլխի մյուս հատվածներում կարդում ենք այնպիսի տեղեկություններ, որոնք տալիս են հենց Մատյանի ստեղծման դրդապատճառներն ու բովանդակության խորախորհուրդ գաղտնիքները հասկանալու բանալին*։ Ընդ որում, քաջ գիտակցելով իր ասելիքի կարևորությունն ու դժվարըմբռնելիությունը, նախապես ընթերցողի ուշադրությունը սևեռում է ընթերցելիքի վրա՝ խորհուրդ տալով գրվածի մասին մտորել սեփական օրինակով:

**Դարձեալ այլ արինակ հոգեւորական,
Որ զսիրոյն յաղուած շաղկապէ ի մի առ եկեղեցի,
Քեւ խորհրդածի.**

Իբր զի առանց բնաւից զուգամասնութեան
Կապակցել լծով հաւանականաւ զվեհն ընդ փոքուն,
Վնասեալ է հաստուածոյն անարատութիւն յանուն Քրիստոսի
ժողովելոց,

**Որպէս ի հատումն եւ ի նուագութիւն
Միոյ յանդամոցս անարգացս՝ պատուաստելոցս ի մարմնի,
Կրճատեալ իմն է յարինուած կազմութեան մարդոյ ջում սենեկի
զգայականի,**

**Եւ շրջեալ է ընտանութիւն պատկերին յանկարզ փոփոխութիւն:
Եւ արդ, այսպիսեաւք եւ ես բազմաւք անզուգական**

հրաշակերտութեամբ
**Եղական պատկեր աստուծոյ՝ կշտամբեալ իսպառ, ոգի իմ գերի:
Եւ թէպէտ յառաջին մանութենէն կողոպտեալ գտար՝
Պատուիրանին յանցաւորութեամբ ի դրախտին կենաց,
Այլ աւագանին լուսազարդ շնորհին զՀոգոյն փշումն առեալ՝
Եւ մանութիւն ես կերպարանին:**

Փաստորեն բանաստեղծը սկզբնապես մեծ դժվարությամբ է դարձել կուսակրոն, որովհետև դա համարում է մարդու սեռական անհամատություն՝ գտնելով, որ դրանից աղավաղվում է մարդու բնական կառուցվածքի աստվածադիր պատկերը, կշտամբվում է «եղական պատկեր աստուածոյ», իսկ ոգին դառնում է գերի: Այսուհանդերձ մխիթարվում է այն բանով, որ ավագանի լուսազարդ շնորհով Հոգու փշումն ստանալով՝ վերականգնվում է կերպարանը:

Հաջորդ ենթադրություն, տեղալով հարցերի մի ամբողջ տարափ, Նարեկացին հայտնում է նաև կուսակրոն ձեռնադրվելու թվականը, սակայն առանց որևէ ակնարկության՝ թողնելով ընթերցողի հնարամտությանը: Բանաստեղծը գրում է.

* Իմիջիպալոց, ամբողջ գլուխն ինքնակենսագրական ու ինքնաբնութագրական բովանդակություն ունի:

Եւ արդ, ընդէ՞ր կորուսեր զփառսն երկնաւորս,
Իբր նախաստեղծն երբեմն՝ զվիճակն երկրաւոր յԱդիմ,
դարաստանի:

Ասելով, թե ինչու կորցրիր երկնային փառքը, ինչպես նախաստեղծ Ադամը զրկվեց երկրային դրախտից՝ բանաստեղծը կարծես հուշում է, որ յԱդիմ բառն այստեղ դրված է հատուկ նպատակով, քանզի շատ հեշտությամբ կարող էր և չլինել, որովհետև առանց դրա էլ երկրորդ տողը «դարաստանի» բառի շնորհիվ չորս վանկով ավելի է առաջիցից: Փորձենք յԱդիմ բառի տառերի փոխարեն տեղադրել իրենց թվային արժեքները: Քանի որ յ կիսաձայնն այստեղ օգտագործված է իբրև նախդիր, ուստի այն հաշվի չենք առնում: Հետևաբար կունենանք Ա-1, դ-4, ի-20, ն-400: Դրանք գումարելով՝ կստանանք 425, որին ավելացնելով 551, կստանանք 976թ.: Իմ կարծիքով, հենց սա էլ Նարեկացու կուսակրոն ձեռնադրվելու թվականն է, որը, հաշվի առնելով նրա կենսագրության ինչ-ինչ հանգամանքներ, միանգամայն բնական ու հասկանալի է:

Փաստ իններորդ: Իբրև կանոն, Նարեկացին նույն բանը հայտնում է մեկից ավելի անգամներ՝ ընդ որում, մի կողմից բարդացնելով, իսկ մյուս կողմից՝ թողնելով նախորդի հետ ընդհանուր եզրեր կամ մեծություններ, որպեսզի ընթերցողը գլխի ընկնի և կարողանա բացել ծածկագրությունը: Այդ տեսակետից հատկանշական է ԿԳ գլխի Գ ենթագույնը, որտեղ նորից ծածկագրել է իր ծննդյան թվականը: Խնդրո առարկա գլուխը բաղկացած է 118 տողից, որոնցից 46-ն ունի «որ» սկսվածք, որոնք, ըստ ենթագույնի, բաշխված են հետևյալ կերպ՝ Ա-16, Բ-12, Գ-14, Դ-4: Իսկ թե դա ինչ նշանակություն ունի, կտեսնենք փոքր-ինչ հետո: Մեզ հետաքրքրող Գ ենթագույնը բաղկացած է հետևյալ 30 տողերից.

70 Որ ի մէջ մահու եւ կենաց շաւիղ վստահութեան ուղղես ի ծովու՝
Վկայութիւն եղեալ հաւաստի, թէ եւ յանկասկածաւորն վայրի
Քեւ պաշտպանիմք անգայթակղելի:

Որ իբր զջուր կաթսայից ի հրոյ եռացեալ,

Որպէս զմեղաց մրրիկ պղտորեալ՝ բանիւ կամաց քոց

խափուցանես:

75 Որ հայիս յերկիր եւ տատանես զսա,
Զի անբանին զմտաւորս զգաստացուցանես:

Որ իբր զակատ մի անձուկ նաւի ի վերայ շարժութեան ալեաց՝

Զանբաւ թանձրութիւն գետնոյս դղորդես,

Որով ծանուցեալ լինիս ամենից հաստուածոց, թէ իցես

աներկբայելի:

80 Որ ի բան քո զարեղ հիմնացեալ ունիս զամենայն,
Որ սերմանես զարտաշնչացեալ մարմինս յերկրի
Եւ զնոյն անկորուստ պահեալ՝ կրկին կենդանածնես:

Որ ապականացուս աւանդեալ՝ անեղծս ստանաս,

Որ ընդ մահացու նիւթոյս զնշխարն կենաց խառնես,

85 Որ հրամանաւ ակնարկութեան ի խուն վայրկենի կազմեցեր,
Պատրաստ կացուցեր զանգարդութիւն ամենից եղանակաց:

Քո է զարութիւն եւ կարողութիւն,

Որ շրջանակես զժամանակս ամաց հոլովման աւուրց

Յայլ նմանութիւն բարեպատե՛մ տեսողութեան:

90 Որ կարդաս զանմոռնչսն՝ իբր զկենդանիս,

Որ ազդես միայն, եւ նոքա ընթանան,

Որ միայն հենուս, անկանես անճառ արուեստի

Հնարագիտութեան՝ մէզ եւ առաւառ:

Որ յետ նախակարգ յարիճուածոյն առաջնաստեղծ լինելութեանն Արարեր գփառաւորեալսն մեծամեծս հրաշակերտիցն հանդիսից, Ըստ Գրոյն երջանկութեան կանխահիացն զարմացման, Այլ իմն գոյացութիւն տաւնելի տեսակի Անեղծ աշխարհագործութեան եւս քան զսոյն՝
Ի մարդանալդ քո, որոց ոչ գոյ թիւ:

Ինչպես տեսանք, նախորդ անգամ ևս Նարեկացին որպէս ելակետ ընդունեց տարվա օրերի թիվը, բայց փոքր-իճ այլ ձևակերպումով՝ «երից հարիւրոց և տասանց վեցից» և «հինգ զգայութեանց»: Իսկ այստեղ արդէն ուղղակի ճշում է տարվա օրերը և եղանակները, որոնց գումարը կլինի 369: Քանի որ գործածել է եղանակներն ու օրերը, հետևաբար, որպէս դրանց միջև կապող օղակ, պետք է վերցնել նաև ամիսների թիվը՝ 12: Վերջապես, եթէ այդ ամեհին ավելացնենք նաև այս ենթագլխում եղած «որ» սկսվածքով տողերի թիվը՝ 14-1=13*, կունենանք 394, որին գումարելով 551, նորից կստանանք 945: Իրավամբ կարող է հարց ծագել. իսկ ինչու՞ 13 և ոչ թե 14: Պատասխանը պարզ է. որովհետև 88-րդ տողը, որը ունի «որ» սկսվածք, մեկ անգամ արդէն գործածել ենք օրերի թվի կապակցությամբ, ուրեմն՝ երկրորդ անգամ չենք կարող ներառել: Իմ այս վերծանությանն ճշմարտացիությունը հաստատվում է նաև այս նույն գլխի վերջին՝ Դ ենթագլխի բովանդակությամբ: Բանն այն է, որ եթէ մինչև այժմ Աստծու և մարդու նմանության մասին խոսում էր բավական մշուշապատ ու անորոշ, ապա վերջին ենթագլխում խոսքը դարձնում է խիստ որոշակի ու բացահայտ՝ իրեն բնութագրում «զամբարշտեալս», «զթմբրեալս», «զանմաքուրս», «զբազմաբիծս», «զբեկեալս», «զլացեալս», «զյուսահատեալս», «զամաչեցեալս», «զխաւարեալս», «զմահու գերեալս» բառերով: Ընդամին, «որ» սկսվածքով բոլոր տողերը ուղղված են Աստվածորդուն, մատնանշում են նրա այս կամ այն կարողությունը: Վերջապես, կա մեկ ուշագրավ պարագա ևս, որը աներևույթ կարող է թվալ պատահական զուգահեյություն, բայց, իմ խորին համոզմամբ, Մատյանում ամեն ինչ այնպես է հաշվված ու հաշվարկված, որ պատահականության մասին խոսք լինել չի կարող, իհարկէ չհաշված գրչական սխալներն ու վրիպանքները: Ինչպես ասացինք, այս գլխի տողերի թիվը 118 է, որից եթէ հանենք վերը ճշված 46 տողը, կմնա 72: Եթէ սրանից էլ հանենք 14 (հիշենք ժԵ գլխում 70 թվի հետ կատարած գործողությունները՝ 70-7-7), կստանանք 58: Կարծում եմ՝ սա հիմք է տալիս ասելու, որ ԿԳ գլուխը գրելիս՝ 1002թ. աշնանը, լրացել է բանաստեղծի 57 տարին և նա թևակոխել է 58-ի մեջ:

Ի դեպ, այս ենթադրությունը հաստատում է Ն.Ղազարյանի այն պնդումը, որ ԿԵ գլուխը Նարեկացին գրել է 1002 թ.՝ 57 տարեկան հասակում: Չէ՞ որ լրիվ 57 տարեկանը և 57 տարուց մի քիչ անցը ըստ էության նույնն են: Ինչ վերաբերում է 65-րդ գլխից հետո ևս 30 գլուխ մնալուն, ես ունեմ այլ կարծիք, որը կարտահայտեմ մեկ այլ առիթով:

Փաստ տասներորդ: Մատյանի ՀԲ գլուխը նույնպես պարունակում է ինքնակենսագրական ու ինքնաբնութագրական հետաքրքիր տեղեկություններ: Գ ենթագլխի (բաղկացած է ընդամենը 17 տողից) վերջին 4 տողն ունեն «ահա» սկսվածք: Ասելիքս պարզ լինելու համար բերում եմ ամբողջ ենթագլուխը:

Պետ վարժից կոչեցայ՝ յանձինս դատախազ,
Իհարբի ուրբի անուանեցայ,
Եւ զգովեստն առ աստուած եղծի,

* Ինչպես տեսանք, Մատյանի ԽԳ գլխում նույնպես տողերի թիվը դեր խաղաց բանաստեղծի տարիքը որոշելու համար: Հատկանշական է, որ դրանից ուղիղ 20 գլուխ հետո՝ 63-րդ գլխում, նորից բանաստեղծը տողերի թիվը դարձրել է հաշվարկման միավոր:

Բարի ասացայ՝ առ եղկութեանն ժառանգութիւն,
 Սուրբ վկայեցայ ի մարդկանէ,
 Որ եմ անմաքու՛ր առաջի աստուծոյ,
 Արդար դաւանեցայ ամենայն իրարք մմբարիշտս,
 Հեշտացայ ի գովեստ մարդկան,
 Զի ծաղր եղէց յատենին Բրիստոսի,
 Յաւազանէ կոչեցայ Արթուն,
 Եւ ես ի քուն մահու անջեցի,
 Ի փրկութեանն ատր Հսկող յորջորջեցայ,
 Բայց զգաստութեանն՝ աչս կափուցի:
Ահա դատաստան, ահա յանդիմանութիւն,
Ահա նոր կշտամբանք եւ հին դատապարտութիւն,
Ահա ամալթ դիմաց եւ տագնապ հոգուց,
Ահա խնդիրք փոքունց եւ կշիռք մեծամեծաց:

«Ահա» բառի այսօրինակ գործածությունը հուշում է, որ այն գաղտնագրված իմաստ ունի: Եվ, իսկապես, տառերի փոխարեն դնելով իրենց թվային արժեքները՝ 1+70+1, ստանում ենք 72, որից հանելով 14, ինչպես վարվեցինք 70 և 71 թվերի դեպքում, կստանանք 58, որը նորից մատնանշում է այս գլուխը գրելիս բանաստեղծի տարիքը: Դա կարող ենք համարել 1002 թ. վերջին կամ 1003 թ. առաջին օրերը: Ըիշտ է, Մատյանում հաճախ ենք հանդիպում նույն սկսվածքով իրարահաջորդ տողերի, երբեմն դրանց թիվը կարող է հասնել մի քանի տասնյակի (օրինակ՝ Զ գլխի Դ ենթագլխում «ոմն եւ» սկսվածքով իրար հաջորդող տողերի թիվը հասնում է 52-ի), ուստի կարող ենք ասել, որ դա սովորական երևույթ է: Բայց նախ՝ չմոռանանք, որ Նարեկացին իր 57 տարին նույնպես հայտնեց հա վանկի միջոցով, իսկ այստեղ պարզապես սկզբից ավելացրել է ա տառը և ստացել «ահա» բառը: Երկրորդ՝ Մատյանում կան նույնիսկ ամբողջ ենթագլուխներ, որոնք սկսվում ու վերջանում են նույն սկսվածքով, բայց դա չի նշանակում, թե դրանք անպայման գաղտնագրություն են, թեև կան նաև այդպիսիք: Այս դեպքում ես այդպես եմ կարծում, որովհետև, այս մեկից բացի, ամբողջ Մատյանում չկա թեկուզ մեկ այլ օրինակ, երբ «ահա» սկսվածքով ոչ թե 4 կամ 3, այլ նույնիսկ 2 տող լինեն իրար մոտ, թեև կան այդ նույն սկսվածքով մի քանի տասնյակ տողեր: Անկարևոր չէ և այն պարագան, որ ընդհանրապես այդ գլուխը, ի մասնավորի խնդրո առարկա ենթագլուխը, խիստ ինքնակենսագրական բնույթ ունի:

Փաստ տասնմեկերորդ: Վաղ մանկությունից բանաստեղծը, զրկված լինելով մորից, պատանեկան տարիներին ականատես էր եղել բարձրաստիճան հոգևորական հոր սրընթաց գաղափարմանը, իսկ ապա 16 տարեկան հասակում տեսել նրա մահը, որը, ինչ խոսք, ցնցել ու վշտացրել էր նրբագգաց հոգու տեր հանճարին: Վերջապես, հոր մահից հետո էլ երկար տարիներ ճաշակել էր բանադրվածի որդի լինելու ողջ դառնությունը. ծաղր ու ծանակ, կասկածանք ու հալածանք, անբարյացակամ ու թշնամական վերաբերմունք և այլն, և այլն: Այնքան խորն էր այս ամենի պատճառած ցավն ու կսկիծը, որ բանաստեղծին ուղեկցել են ամբողջ կյանքում և Մատյանում պատկերվել ամենամոռայլ գույներով: Այդ տեսակետից ուշագրավ է հատկապես Մատյանի 68-րդ գլուխը, որի Դ ենթագլուխում նկարագրում է հոր մահը, իսկ Ե ենթագլխում հոր մահից հետո իր կրած անլուր տառապանքներն ու հալածանքները: Ամենասեղմ գծերով ուրվագծելով իր անցած ուղին և ներկա սոսկալի վիճակը՝ բանաստեղծը գրում է.

65 Եւ արդ, զիա՞րող առից մխիթարութիւն այսքանեաց վշտաց,
 Եւ կամ ընդ ո՞րքանեաց տարակուսանաց խաւարի
 Լուսաւորութիւն յուսոյ կեանաց խառնեցից,

70 Եւ կամ ո՞ր արդեւք զգարշապարս ոտին կատուցից,
 Եւ կամ յո՞ր վստահութիւն զաչս իմ յառեցից,
 Եւ զի՞նչ անդորրութիւն ծփանացս նկատեցից,
 Եւ կամ յո՞ր ըղձական դիրութիւն ձեռն համբարձից:
Ջի եթէ ի ձեղուն բարձրութեան երկնի՝
Անտի՛ անձրեւեաց հուրն Սողոմայ, որպէս ասացեալ է,
 Իսկ եթէ յատակ երկրի խորութեան՝
 75 Սա՛ եբաց զկոկորդն ըմբռնողական
 Եւ եկու զԴադան բանակաւքն Աբիրոնի:
 Եթէ յանդգնեցայց փախչել յունողէն,
 Գուցէ կալցի՛ զիս վիշապն ահագին,
 Եթէ ընդ գազանս ինչ թափառեցայց՝
 80 Արագո՛ւնք են խնդրել զվրէժ ստացողին
 Առաւել առ իս, քան երբեմն զԵղիսէի՛ն՝
 Առ մատաղ մանկունս բեթելացիս քրմորդիս:
 Եթէ յամենատարած առոյս պարզութիւն՝
 Ա՛յն եղև եգիպտացոցն խաւար շաշափելի,
 85 Եթէ ի թոչունս բարձանց՝
 Նոքա՛ են կոչեցեալք ի սպանդն զոճին բոտրայ դիականցն:

Ե

Եթէ ի տկարսն խիզախեցից, վատնիմ ի պիծակա՛ցն,
 Եւ զի՞ պիտոյ են ինձ առիծունք:
 Եթէ յարջոցն պատառողաց ապրեցայց,
 90 Մժի՛ղքն՝ արեան ծարախ՛քն, ինձ պատահեցեն:
 Եթէ յանհոգս ուրեք նստիցիմ,
 Մժող՛ւկքն անարգագոյնք, իբր ցնցուղս հրոյ եռացման, զի՛նե՛ս
 մաղեացիւն:

Եթէ յեղջերէ միեղջերոյ փախնուցում զերծեալ,
 Նկու՛ն ճիրանք աղկաղկաց մնոցն մորմոքողաց զիս կեղեքեցեն:
 95 Եթէ ի սենեակս շտեմարանաց խորշից դաւղեալ ամփոփիցիմ,
 Տաղտկատեսակ գարշութիւն գորտա՛ցն զիս զազրացուցեն:
 Եթէ ի վայրս ինչ անդաստանաց կացեալ զետեղեցայց,
 Ծարք շանաճանճո՛ցն տարմից զի՛նեւ պատեցեն:
 Թողում ասել զխառնիճն եւ զջորեակն՝ զգարն զաւրաւոր,
 100 Ընդ թունաւորն թրթուր եւ ընդ անկենդանական երելիւն,
 Հանդերձ ջրակարծ կարկտիւն եւ ապականագործ եղեմամբն,
 Որ առ աչաց տեսիլ ապազէնք եւ նուաստագոյնք,
 Բայց ի յակնարկելն աստուծոյ յաւէտ գոռոգաբար ուժգնութեամբ
 Հարին, հանին, վանեցին, զհպարտն ամբարհաւանութիւն
 105 Փարաւոնի բռնութեանն բունն գաւազանի՛ն՝ յաղթող վիճակաւ,
 Որ են կերպարանք թաքուցելոցն կրից լկողաց
 Անձնականացն աներեւութից եգիպտացոցն անարեւնութեանց՝
 Յոգի տանջողաց, գաղտնի վնասողաց:

Կարծում եմ, սկսած 77-րդ տողից, բանաստեղծը անկեղծորեն նկարագրում է ինչ-որ ժամանակ իր ունեցած չարչարանքներն ու տառապանքները: Եթէ հավատանք Նարեկացուն, իսկ չհավատալու հիմք չունենք, ապա պետք է ընդունենք, որ այդ ժամանակ բանաստեղծը ոչ մի պահ ու ոչ մի տեղ գիշեր ու զօր չի ունեցել հանգիստ, որովհետև, ինչպես ինքն է ասում, «Եթէ յանհոգս ուրեք նստիցիմ, մժող՛ւկքն անարգագոյնք, իբր ցնցուղս հրոյ եռացման, զի՛նե՛ս մաղեացիւն» (տ. 91-92), իսկ «Եթէ ի սենեակս շտեմարանաց խորշից դաւղեալ ամփոփիցիմ,

տաղտկատեսակ գարշութիւն գորտո՛ցն զիս զագրացուցեն» (տ. 95-96): Բնական է մտածել, որ դա տեղի է ունեցել հենց բանաստեղծի բանադրված հոր մահվանից հետո, երբ, որպէս երկկողմանի ծնողագուրկ, Հովհաննէս եղբոր հետ միասին գտնվում էր մայրական գծով արյունակից հարազատ, Նարեկա վանքի վանահայր Անանիա Նարեկացու խնամքի տակ: Բնականաբար ապրում և ուսանում էր միաբանության ներսում, այլոց հետ համատեղ: Միշտ է, ինչպէս ասվեց, վանահայրն իր հարազատն էր, բայց չմոռանանք, որ նախ՝ նա չէր կարող ամեն ժամ ու ամեն տեղ հսկել ու կարգավորել միաբանության բոլոր անդամների վարքն ու բարքը: Երկրորդ՝ նույն միաբանության մեջ ապրում էին սոցիալական տարբեր ծագում ունեցող, տարբեր հետաքրքրությունների ու մակարդակի, տարբեր նախասիրությունների ու շահերի, տարբեր դիրքի ու աստիճանի տեր մարդիկ՝ բարձրաստիճան հոգևորականներ ու հասակակիցներ, միաբանության սպասարկուներ ու սկսնակ աշակերտներ: Դրանք բոլորը, բանաստեղծի բառերով ասած, «են կերպարանք թաքուցելոցն կրից լլկողաց անձնականացն աներեւութից եգիպտացուցն անարեւնութեանց՝ յոգի տանջողաց, գաղտնի վնասողաց» (տ. 106-108):

Իրավամբ հարց է ծագում. իսկ ինչի՞ց է իմացվում, որ այս ամենը վերաբերում է իրեն ու տեղի է ունեցել հենց հոր մահից հետո: Բանն այն է, որ այդ նույն գլխի 65-76 տողերում, նկարագրելով իր անօգնական ու անհուսալի վիճակը, բանաստեղծն ասում է, որ չի կարող ոչ մեկին հավատալ, վստահել և կամ որևէ մեկից օգնություն հայցել: Պատճառն այն է, դառնությամբ ավելացնում է Նարեկացին, որ եթե դիմի «ի ձեղուն բարձրութեան երկնի՝ անտի՝ անձրեւեաց հուրն Սողոմայ, որպէս ասացեալ է, իսկ եթէ յատակ երկրի խորութեան՝ սա՛՛ երաց զկոկորդն ըմբռնողական եւ եկուլ զԴադան բանկաւքն Աքիրոնի»: Այստեղ բանաստեղծը Սողոմի օրինակով խորհրդանշել է իր հոր բանադրության փաստը, որի հետևանքով նա գահավիժեց երկնային բարձունքից: Այլապէս ի՞նչ կապ ունի հազարամյակներ առաջ Սողոմի վրա Աստծու բարկությանը թափված կրակը իր անձի ու ճակատագրի հետ: Իմ այս ենթադրությունն ամրապնդվում է հաջորդ տողերի մեկնաբանությամբ: Բանն այն է, որ եթե հայոց կաթողիկոս Անանիա Մոկացու կողմից իր հոր բանադրանքը բանաստեղծը համեմատում է Սողոմի աղետի հետ, ապա նրա մահը նմանեցնում է Դադանի՝ մահվանը: Իսկ ո՞վ էր Դադանը և ինչի՞ց կամ ինչպէ՞ս մահացավ: Հին Կտակարանից հայտնի է, որ Մովսէս Մարգարեի դեմ Կորխի կազմակերպած ապստամբությանը մասնակից են դարձել նաև Եղիաբի որդիներ Դադանը և Աքիրոնը: Ընդ որում, ապստամբության հիմնական պատճառը Մովսէսին տրվող հարկն էր: Միջադեպը, հարկավ, ավարտվեց Մովսէսի հաղթանակով, որովհետև Աստծու կամքով «բացուեց գետիճը և կուլ տուեց նրանց ու նրանց ընտանիքներին, Կորխին յարած մարդկանց ու անասուններին» (Թուրք, 16.32): Հասկանալի է, Կորխին հարածների թվում էին նաև Դադանն ու իր եղբայր Աքիրոնը, ուստի նրանք ևս կուլ զնացին իրենց ընտանիքներով և ունեցվածքով հանդերձ: Իսկ եթե մտաբերենք, որ նույն պատճառով էր Խոսրով Անձևացին՝ Նարեկացու հայրը, հակադրվել կաթողիկոս Անանիա Մոկացուն, որի համար էլ բանադրվել ու որոշ ժամանակ անց մահացել էր, ապա միանգամայն հասկանալի կդառնա, որ բնավ պատահական չէ Դադանի անվան ու մահվան հիշատակումը, այլ այդ ձևով բանաստեղծը գաղտնագրել է իր հոր մահվան թվականը: Ուստի եթե Դադան անվան տառերը փոխարինենք իրենց թվային արժեքներով, ապա կունենանք հետևյալ հավասարումը՝ 4+1+4+1+400=410 (զ նախդիրը, ինչպէս ասացի, հաշվի չի առնվում):

* Թեև Աստվածաշնչի աշխարհաբար թարգմանության մեջ (Երևան, 1999) գրված է Դաթան, բայց պահպանում են Մատյանի գրությունը, որովհետև ներկա դեպքում դա խիստ կարևոր է:

Հասկանալի է՝ քրիստոնեական տոմարով արտահայտելու համար պետք է գումարել 551, ուստի կատանանք 961, որը և Նարեկացու հոր մահվան թվականն է: Սրանով փաստորեն հաստատվում է հայագիտության մեջ բոլորվին վերջերս արտահայտված տեսակետը. Պ. Խաչատրյանը, մանրամասն ուսումնասիրելով բանաստեղծի հոր մահվան թվականի հարցը, պարզորոշ եզրակացնում է, որ Խոսրով Անձևացին «մահացել է 954 թվականից հետո, բայց 965-ից առաջ, հավանորեն 960 թվականից մեկ-երկու տարի անց»⁴:

Կարող է սա ոմանց թվալ պատահական զուգադիպություն, բայց նախ՝ եթե Նարեկացին հատուկ նպատակով չի ընտրել Դադան անունը, ապա նա պետք է, որ հիշատակեր ոչ թե Դադանի, այլ Կորխի անունը, որովհետև վերջինս էր ապստամբության կազմակերպիչն ու ղեկավարը, և բնավ պատահական չէ, որ Հին Կտակարանում այդ միջադեպը վերնագրված է «Կորխի, Դաթանի եւ Աբիրոնի ապստամբությունը» ձևով: Երկրորդ, ինչու՞ պետք է Նարեկացին մոռացության տար հարազատ հոր մահը և այդպես կարևորեր Դադանի մահը իր համար, որը տեղի էր ունեցել հազարամյակներ առաջ և ոչ մի առնչություն չուներ իր անձի ու ճակատագրի հետ: Վերջապես, դիտելի է, որ Դադան անունն օգտագործված է հայցական հոլովով, այսինքն՝ ուղիղ ձևով, իսկ Աբիրոն անունը՝ սեռական հոլովով:

Փաստ տասներկուերորդ: Դեպքերի ընթացքն ու շարադրանքի տրամաբանությունը հուշում են, որ եթե բանաստեղծը ծածկագրել է իր հոր մահը, ապա պետք է գաղտնագրած լինի նաև նրա ծննդյան թվականը: Եվ իսկապես, Մատյանի 66-րդ գլխում գտնում ենք այդ տարեթիվը: Այստեղ իրեն ներկայացնելով որպես կենդանի դիակ՝ Աստծուց խնդրում է ներողամիտ լինել իր հանդեպ և չհասցնել նորանոր հարվածներ, այլ, ընդհակառակը, զորավիզ լինել իրեն, և այն դավերը, որ նյութում են թշնամիներն իր դեմ, վերադարձնել իրենց: Բերենք նման մըտքերից մի քանիսը.

- 50 **Մեռեալ պատկերիս մի՛ ոխս պահեսցես,**
 Ընդ անշունչ կերպարանիս մի՛ ի դատ քննութեան մտցես,
 Մահու տանջեցելոյս մի՛ հարուածս յաւելցես,
 Ընդ բեկեալ խեցեղէն անաթոյս մի՛ ուժգութեամբ մարտիցես,
 Վճռաւ կոշկոճելոյս մի՛ բարկութիւն կրկնեսցես,
- 55 **Կործանեալ շինուածոյս մի՛ պատուհաս մատուցես...**
- 65 **Ջայքանեաց բազմապատիկ բանից կշտամբեալս**
 Մի՛ վերստին յանդիմանեսցես...
- 90 **Մարտն, որ առ իս, քե՛ւ, տէր, վանեսցի...**
- 126 **Եթէ ի միջարեւական տապոյ փորձութեանցն**
 Արեգակնակէզ վատնիչ խորշակին
Ջիս ի յարմատոց խախտել կարծիցէ,
 Ի գարութեանէ՛ նշանիդ լուսոյ խլեալ գաւսասցի:
- Եթէ յատակս մահու հայել գիս խարդախեսցէ,
 Բնակել կենդանոյն ի վէմն մահու զնա մեռուսցէ:
 Եթէ խնդասցէ ընդ մարդկարեւնս իմ գայթակղութիւն,
- 155 **Կրկի՛ն կորասցի կարկամեալ կամաւ,**
 Յորժամ անմահն աստուած, յարուցեալ փառաւ,
 Ընդ իր նորոգեաց զբնաւ մահացեալս ...

Իմ կարծիքով, այս գլխում բանաստեղծը «գիս ի յարմատոյ խախտել», «յատակս մահու հայել», «զբնաւ մահացեալ» և նման այլ արտահայտություններով ակնարկում է իր մասին, որպեսզի, իր բառերով ասած, «հնչեսցէ զմոռացեալսն»

⁴ Պ. Խաչատրյան, ԱԶՎ. աշխ., էջ 31:

և «հռչակեաց է զգաղտնիսն»: Իսկ գաղտնիքը, թվում է, տրված է 155-րդ տողում՝ «Կրկի՛ն կորասցի կարկամեալ կամաւ»: Ինչպես տեսնում ենք, նույն տողում կա ընդամենը չորս բառ, որոնք բոլորն էլ սկսվում են կ տառով: Ընդ որում, երկուսում առկա է երկուական, իսկ երկուսում՝ մեկական կ, որոնք դասավորված են $2+1+2+1$ սխեմայով: Փաստորեն ունենք 6 կ: Եթե կ տառի փոխարեն տեղադրենք իր թվային արժեքը՝ 60, ապա կունենանք $6 \times 60 = 360$: Իսկ որ բնավ անկարևոր չէ՝ դա արված է հենց 66-րդ գլխում, որի տասնավորների և միավորների արտադրյալը (60×6) նույնպես լինում է 360: Եթե 360-ը արտահայտենք քրիստոնեական տոմարով, կունենանք $360 + 551 = 911$, որը, իմ խորին համոզմամբ, բանաստեղծի հոր՝ Խոսրով Անձևացու ծննդյան թվականն է: Այս ենթադրության օգտին է խոսում նաև այն փաստը, որ, ինչպես տեսանք, բանաստեղծը նրա մահը ծածկագրել է 68-րդ գլխում, ուստի միանգամայն բնական է, որ նախ պետք է հայտնել ծննդյան, իսկ հետո մահվան թվականը:

Մատյանում գրեթե չկա մեկ այլ տառով նույնաման որևէ տող, բացի ան - նախածանցով կամ զ նախդիրով կազմված բառերով առնաձին տողերից: Օրինակ՝ Գ գլխի 5-7 տողերը բաղկացած են ան- նախածանցով, իսկ ԽԵ գլխի 39, 41, 46-47 տողերը՝ զ նախդիրով բառերից: Ուշագրավ է, որ 69 գլխի 31-32 տողերը նույնպես կառուցված են այնպես, որ ունեն 6 կ: Այդ տողերն են՝

**Կորակոր գնացիքն, արջնաթոյր գունովն,
Կրկնապարոյր, կոածագ կտցան,**

Այս տողերը, փաստորեն կապված լինելով իրար հետ, քանզի վերաբերում են նույն օբյեկտին, պարունակում են 6 կ, որոնք դասավորված են $2+2+1+1$ սխեմայով: Իսկ, ինչպես արդեն ասել ենք, դրանք փոխարինելով իրենց թվային արժեքով՝ ստանում ենք 911, որը պետք է լինի բանաստեղծի հոր ծննդյան թվականը: Պարզվում է, որ Խոսրով Անձևացին մահացել է ոչ թե մոտավորապես 65 տարեկանում⁷, այլ ուղիղ 50-ամյա հասակում: Իսկ եթե նկատի ունենանք, որ «Խոսրովի մահը թերևս տեղի է ունեցել անբնական, մույթ հանգամանքներում, հոգեկան բարդ կացության մեջ»⁸, ապա միանգամայն հասկանալի կդառնա, թե ինչու հանճարեղ բանաստեղծը մինչև կյանքի վերջ խորապես կսկծացել է հոր անժամանակ կորուստը:

Փաստ տասներեքերորդ: Մատյանի ՀԷ* գլխի Ա ենթագլխում բանաստեղծը

⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 45: Իմիջիայլոց, նման եզրակացության համար Քիմք է ծառայել Անանիա Մոկացու Բ թղթում տեղ գտած «այեօք ծերութեամբ զարգացեալ» արտահայտությունը, որը, իմ կարծիքով, պետք է ընդունել վերապահությամբ, որովհետև Խոսրովի վաղահաս մահը ցավ էր պատճառել նաև Մոկացուն, որը, խղճի խայթ զգալով, զգուշացել է ապագա սերունդների կողմից մեղադրվելուց: Ըստ այդմ, գրել է հատուկ նամակ՝ ուղղված ոչ թե որոշակի հասցեատիրոջ, այլ ընդհանրապես ապագա սերունդներին: Դրանով իսկ այն բացառիկ երևույթ է հայ հին և միջնադարյան նամակագրական ժանրի պատմության մեջ: Քանի որ Խոսրովը մինչև վերջին շունչը չզղջաց և մահացավ բանադրված, ուստի, ասում է Մոկացին, հարկադրված գրեցի «զայս մնացական կտակ առ յապա եկելոցն, զի զգուշացին յայնպիսի ընդվայրայած քննութեանց և ուղղութեամբ նկատեսցեն զաւելոտի առ հանդերձեալ կեանսն, զի Շատ է աւուրն չար իւր» (Գալուստ Տեր-Մկրտչյան, Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք Բ, աշխատասիրությամբ պրոֆ. Պ. Հ. Հակոբյանի, ս. Էջմիածին, 1998, էջ 127, ընդգծ. իմն է, - Հ. Մ.): Եթե նկատի ունենանք, որ նրանց հակասությունը սկիզբ էր առել 954թ., երբ Խոսրովը 43 տարեկան էր, իսկ Մոկացին իր թուղթը գրել է դրանից առնվազն ութ տարի անց, ապա «այեօք ծերութեամբ զարգացեալ» արտահայտությունը պետք է հասկանալ ոչ թե արդեն ծեր էր, այլ արդեն հասուն տղամարդ էր, այսինքն՝ փոքր չէր իմաստով:

⁸ Նույն տեղում:

* Ի դեպ՝ ակադեմիական հրատարակության մեջ սխալմամբ տպագրվել է ՀԵ (75):

հայտնում է, որ ինքն այդ գլուխը շարադրում է Մեծ պահքի սարսափելի ուրբաթ օրը: Ահա այդ հատվածը.

- Եւ քանզի ար է արհնաբանեալ եւ լուսանորոգ
Կշռութեան երկուց ընտրութեանց
Արարածոցս սասանութեանց՝
5 Յեղանակելոյ յայլ իմն էութիւն երկնակենցաղ անփոխադրելի,
Ամբարձելոցն խոնարհութեան եւ կործանելոցս վերբերութեան,
Սարսափելի ուրբաթու Մեծի պասեքիս,
Յորում եկն եհաս ժամ բարեպատեհ
Գրել ինձ զայս նուագ ձայնի հեծութեան զուարճախառն երկիւղի,—
Ահա ըղձալի համարիմ ասել աստանար ի քոյոց այտի,
10 Զոր ընդ իմ կրեցեր, աստուած բոլորից:

Կասկածից վեր է, որ բանաստեղծն արդեն թևակոխել է 1003 թ. գարունը, և իր տարիքը 58-ի մեջ է: Մատյանի գրության ժամանակի մասին Նարեկացին հետաքրքիր տեղեկություն է հայտնում մահ ԶԸ գլխի վերջնամասում, որտեղ, դիմելով Քրիստոսին, ասում է, թող թագավորեն «կեանքդ շնորհաց ողորմութեան քո»:

- Ի գանձս պահեստի ոսկերացն ցամաքելոց,
Որով ի ժամանակս կենդանականս
55 Սկզբնաւոր լուսոյ մտի գարնայնոյն՝
Նորոգման աւուրն պայծառութեան՝
Քոյովդ ցաւով յոգի անեցեալ
Այսու փրկութեամբ ամմահականս
Եւ անցամաքելի վերամբարձութեամբ
60 Շառափղս ձգեալ իմանալեացն բարեաց՝
Դարձեալ դալարացայց եւ կրկին ծաղկեցայց,
Ըստ քոյինաշունչ Գրոյն յուսադրութեան:

Եթե հաշվի առնենք, որ այս տողերը բանաստեղծը գրել է 1003 թ. հուլիսին, ապա կարող ենք վստահությամբ ասել, որ բուն Մատյանից (ինչպես ասացի, իմ կարծիքով ՂԲ և ՂԳ գլուխներն ավելացրել է հետագայում) մնացել է ընդամենը 5 գլուխ՝ ընդհանուր ծավալով 376 տող, որը կարող էր ավարտել ճիշտ այն ժամանակ, երբ սկսել էր՝ երեք տարի առաջ: Դրանով իսկ անուղղակիորեն հաստատվում է հիշատակարանում բանաստեղծի գրածի ճշգրտությունը, այսինքն՝ Մատյանն ավարտել է «լետ երից ամաց անցելոց, որ զկնի գալստեան ի կայս եւ ի կոյս կողմանց հիւսիսոյ դիմաց արեւելից յաղթող եւ մեծ կայսերն հոռոմոց Բաւլի»:

Հնարավոր է՝ ընթերցողներից շատերին թվա, թե ներկա դեպքում ես արհեստականորեն փաստերը հարմարեցնում եմ իրար, բայց դա պարզապես թվում է, որովհետև Մատյանի կառուցվածքում մամօրհինակ փաստեր շատ կան, որոնց բոլորին հնարավոր չէր անդրադառնալ մեկ հողվածում, ուստի հարկ եմ համարում հիշեցնել, որ իրավունք չունենք կասկածելու Նարեկացու և ոչ մեկ բառին, քանզի հիշատակարանում իզուր չի գրել, որ «ի յայնմ անդորրութեան միջոցի, յորում եզերեալ ընդոտնեցան թշնամիք եկեղեցույ, ստացեալ հիմնեցի, կառուցի, կարգեցի, կուտեցի, արձանացուցի, դիզի, բարդեցի, կացուցի, ցուցի, հաստատելով ի հրաշակերտութիւն միագոյ իրի զբազմաստեղնեան դրուագս դրութեան այսմ սոփերի արգասաւորի» (ընդգծումն իմն է. - Հ. Մ.): Փաստորեն բանաստեղծը թվարկում է մեկը մյուսից տարբեր գործողություններ, որոնց միջոցով կարողացել է ստեղծել որքան բազմամասնյա, նույնքան և կառուցիկ ու ամբողջական իր այս հրաշակերտությունը:

Կարծում եմ՝ ասվածը բավական է՝ համոզվելու, որ Գրիգոր Նարեկացու «Մատենան ողբերգութեան» գլուխգործոց ստեղծագործությունը լի է բացահայտման կարող ինքնակենսագրական գաղտնիքներով, որոնցից ես փորձեցի վերծանել միայն, իր իսկ բառերով ասած, «նուազս ի յոգունց, իբր յամբաւ բազմութեանց ծովու կաթիլ մի առեալ»։ Այդպէս եմ վարվում՝ հետևելով հենց հանճարեղ բանաստեղծի փիլիսոփայական հավերժ ճշմարիտ սկզբունքին.

Եւ զի մի՛ զբնան ասելով յամենայնէն վրիպեցայց,
Իբր յարեգակնէ այլայլեալ աչաց տկարութիւն,
Ի շատն ասել լոնցից եւ ի սական ժամանեցից՝
Բառականացեալ ամէնապիկար կարիւ (Բան ԼԸ, տ. 44-47):

Իսկ թե որքանով է ինձ հաջողվել քչի միջոցով գաղափար տալ շատի մասին, թողնում եմ անաչառ ընթերցողին:

Г. К. МИРЗОЯН - *Попытка расшифровки тайнописей «Нарека»*. - Вопреки давно утвердившемуся в нарекациеведении представлению о том, что в гениальном произведении Григора Нарекаци - поэме «Книга скорби» обнаруживаются лишь очень скудные сведения о жизни и деятельности поэта, автор статьи на основании целого ряда наблюдений показывает, что, пользуясь характерными для средневекового мышления средствами тайнописи и иносказания, Нарекаци сообщает в «Книге» ценные автобиографические факты, которые чрезвычайно важны как для освещения неизвестных доселе страниц жизни поэта, так и для правильного понимания и истолкования его наследия в целом и «Книги скорби» в частности. Более того, по мнению автора, факты такого порядка в «Книге» столь многочисленны, что все они не могут быть представлены в рамках одной статьи. В настоящей статье делается попытка расшифровать из них только тринадцать, при этом часть относится к хронологии создания поэмы, часть - к мирской и религиозной стороне жизни поэта и часть - к датам рождения и смерти его отца. При несомненной существенности всех этих данных особенно ценными и неоспоримыми предстают в расшифровке тайнописей даты рождения поэта и смерти его отца. Со всею достоверностью устанавливается, что величайший армянский поэт родился в 945 году, а его отец умер в 961 году. Если установление первой даты имеет определяющее значение для построения примерной хронологии жизни и творчества Нарекаци, то вторая важна для понимания причин и стимулов, подвигших поэта к созданию «Книги скорби».